Էսաց.—Ի՞նչ խաց ուտինք, իս էկի էստեղ թագաւորութին չ'տեսայ, մէկ մարդակիր պառաւ տեսայ։

Էսաց.—Ի՞նչ էրիր պառաւու խիտ։

Էսաց.—Սպանրցը, գլեոխ կտրիր իմ, էստեղ թալիր իմ։

Էսաց.—Որ տիւ խարցնիս, էսաց, մի քիւր ինչ մօրից էլաւ, մարդակիր էր. մի խէրն էլ մի մէրն էլ էն ի կիրի, էսա քեաղ-քի միլաթ[1]) բիրադի էն ի կիրի. չուր Մըսր կիրի. էսաց, մէկ ատամ Հալաբայ չուր Մըսր աւիրիր ի։

Էդա քեառսուն մարդն էլ էկան, Մհերի ոտ ու ձեռ պագ-նիցին։

Ասին.—Մինք չինք կէրի էդ պառաւուն յաղթը, խէրանական[2]) քեաղաք առնը, էդ յաբով զքի բիրինք էնու սպանիլիւ. էն էր-կու մարդն էնու յախուն չոկուան, փախան. էսաց՝ կ'ուզիս քեաղ-քի թագաւորութին ա՞ռ, մինք քիւ ծառէն մինչիւ օր մեռնիլիւն։

—Իս ձենէ բան չըմ ուզի, ոչ թագաւուր կ'ըլնիմ, ոչ քեաղ-քի տէր կ'ըլնիմ. ամա ձենէ կ'ուզիմ մէկն թագաւուր նստը էս-տեղ, մնացած խատ ձի կեան՝ էրթանք, Բաղդատայ քեաղաք տես-նանք. իմ խրօխպօր գերեզման, էսաց, գեոյ Բաղդատայ քեաղաքն (ինչ Բաղդասար Պղնձէ քեաղքէն էկիր էր, կեացիր էր էնդեղ մե-ռիր էր. քեաղաք շինիր էր, անուն դրիր էր Բաղդատ, զինք Բաղ-դասար էր*)։

Քեառսունով էլան, կեացին, Բաղդատայ քեաղաք խասան. տե-սան, որ քեաղաք շինուկ ը, թաքմիլ[3]) դրուկ ը. որ խասան, տեսան մէկ ծըրունուկ մարդ էնդեղ նստուկ ը։

Խարցնիցին[4]), ասին.—Ի՞նչ կայ Բաղդատայ քեաղաք, Բաղդա-տայ թագաւուր ո՞ր մէկն ը։

---

[1]) Ծողովուրդ։ [2]) Հայրենի, հայրենական։ [3]) Կատարեալ, ա-ռանց պակասութեան։ [4]) Հարցրին։

*) Այս և հետևեալ երկու հատուածները ցոյց են տալիս, որ Բաղդասարի ճիւղը շատ աւելի ընդարձակ պիտի լինի և պատ-մական ակնարկներով աւելի առատ։